ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ/ՀԾ/ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-21/34 185

ք. Երևան «19» 05 2021թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա.Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գագիկ Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթների /ՀԾ/ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3 873 450(երեք միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5	Իրավ.հասցե՝ ք.Երևան, Չարենցի փ. 1
Հ/Հ 900011018695	հ/հ՝ 1930030005130100
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Կոնվերս Բանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 02698604	ՀՎՀՀ՝ 00807555
_____Վ. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.	_____Գ. Մարգսյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«19» 05 2021 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-21/34 ծածկագրով պայմանագրի
185-21

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

ավերով նախատեսված փաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Ծառայության մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	48441300/1	Սույն պայմանագրով Կատարողը Պատվիրատուին թույլատրում է օրենքով նախատեսված գույքային իրավունքների գործողության ողջ ժամկետում, իսկ օրենքով թույլատրվող դեպքերում՝ նաև անժամկետ, օգտագործել «ՀԾ-Ձեռնարկություն» Համակարգչային ծրագրի բազմամասնաճյուղային տարբերակը (այսուհետ նաև՝ Համակարգ) հետևյալ կոնֆիգուրացիաներով՝ • Հաշվապահություն, • Հիմնական միջոցներ, • Ապրանքանյութական արժեքներ, • Աշխատավարձ, • Կադրեր: Կատարողը Պատվիրատուի հետ համատեղ Պատվիրատուի Մ.Մկրտչյան 5 հասցեում գտնվող գրասենյակում ներդնում և սպասարկում է Համակարգը: **Ներդրման** աշխատանքներն են. Համակարգի տեղադրում (ինստալյացիա) Պատվիրատուի գրասենյակում: Ընդ որում, Պատվիրատուն պետք է ունենա տեխնիկական նվազագույն պահանջներին բավարարող պայմաններ, որոնք սահմանվում են ստորև: Այդ պայմանները միակողմանիորեն կարող են փոփոխվել Կատարողի կողմից՝ կախված Պատվիրատուի առանձնահատկություններից, ինչպես նաև համակարգչային տեխնոլոգիաների զարգացման թելադրանքով: Կատարողը խորհրդատվություններով օժանդակում է Պատվիրատուին՝ սկզբնական տվյալները Համակարգ մուտքագրելու հարցում: Կատարողը և Պատվիրատուն համատեղ իրականացնում են համակարգի շահագործումը սկսելու համար անհրաժեշտ կարգավորումները: Կատարողը ուսուցանում է Պատվիրատուի աշխատակիցներին սույն տեղնիկական բնութագրի 1.1. կետում նշված հասցեում՝ Համակարգի շահագործումը սկսելու նպատակով և կազմակերպում է շահագործման վերահսկումը ներդրման ընթացքում: **Սպասարկման** աշխատանքներն են. Խորհրդատվության տրամադրում Համակարգի շահագործման ընթացքում: Ըստ Համակարգի՝ ողջամիտ և սույն պայմանագրով նախատեսված նպատակային նշանակությամբ օգտագործման անհրաժեշտության, Համակարգի թարմացումների տրամադրում, որոնք իրենց մեջ ներառում են.՝ Համակարգի լրամշակում՝ կապված օրենսդրության փոփոխման հետ, Համակարգի նոր ֆունկցիոնալ հնարավորությունների մշակում, Համակարգի համապատասխանեցում նոր տեխնիկական և ծրագրային ապահովման պահանջներին, Կատարողի կողմից որոշված այլ ծրագրային փոփոխություններ:	դրամ	3873450	1	Մ.Մկրտչյան 5,	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև ծառայության մատուցման ավարտը , բայց ոչ ավել քան 2021թ. դեկտեմբերի 25

		Խորհրդատվություն՝ ավտոմատացման գործընթացի կազմակերպման, համակարգչային տեխնիկայի և ծրագրային համակարգերի հետ կապված հարցերի վերաբերյալ: Պայմանագրով նախատեսվում է ներդնել ՀԾ-Ձեռնարկություն համակարգի բազմամասնաճյուղային տարբերակը հետևյալ կոնֆիգուրացիաներով՝ Հաշվապահություն Հիմնական միջոցներ Ապրանքանյութական արժեքներ Աշխատավարձ Կադրեր Հաշվապահություն • Նկարագրում է հաշվեկշռային, արտահաշվեկշռային, բյուջետային, օգտագործողի կողմից նկարագրվող հաշիվները և գործընկերների քարտարանը • Մշակում է հետևյալ փաստաթղթերը Դրամային և արտարժույթային հիշարար օրդերներ Արտարժույթային մնացորդների վերագնահատման հանձնարարագրեր Արտարժույթի փոխարկում Դրամարկղի մուտքի և ելքի օրդերներ Բանկային մուտքեր և ելքեր, վճարման հանձնարարականներ Վաճառքի և գնման պայմանագրեր Վաճառքի և գնման հաշիվ-ապրանքագրեր Կանխիկի և փոխանցման վճարման կարգադրություններ Փոխմարման կարգադրություններ • Կազմում է հետևյալ հաշվետվությունները Մնացորդների վիճակը և շրջանառության տեղեկագրերը դրամով և արտարժույթով՝ ըստ կուտակիչ հաշվի, ըստ գործընկերոջ, ըստ հաշիվ-ապրանքագրերի և ըստ պայմանագրերի Կոնկրետ հաշվի կամ գործընկերոջ շարժը - (Տ-հաշիվ), իսկ արտարժութային հաշվի համար նաև Տ-համարժեքը Գործառնությունների մատյան դրամով և արտարժույթով • Կազմում է ֆինանսական հաշվետվության ձևերը (Ձև1 – Ձև5) Հիմնական միջոցների հաշվառում • Ձևավորում է հիմնական միջոցների քարտարանը • Մշակում է հետևյալ փաստաթղթերը Ընդունման-հանձնման ակտեր Ներքին տեղաշարժի փաստաթղթեր Լուծարման ակտեր Վաճառքի և գնման հաշիվ-ապրանքագրեր Վերանորոգման և վերագնահատման կարգադրություններ Կառուցման ծախսումներ Գույքագրման տեղեկագրեր • Կազմում է հետևյալ հաշվետվությունները Տեղեկանք քարտարանի մասին ըստ հիմնական միջոցների տեսակների, բաժինների, պատասխանատու անձերի և կուտակիչ հաշիվների					

		Տեղեկանք մաշվածքի վերաբերյալ Գործառնությունների մատյան Ապրանքանյութական արժեքներ • Նկարագրում է նյութական արժեքների քարտարանը • Վերահսկում է օգտագործողների հասանելիությունը պահեստներում մնացորդ դիտելու, մուտքեր կամ ելքեր կատարելու համար • Մշակում է հետևյալ փաստաթղթերը Նյութական արժեքների մուտքի և ծախսի օրդերներ Պահանջագրեր Վաճառքի և գնման հաշիվ-ապրանքագրեր Հավելյալ ծախսերի բաշխում՝ տարբեր մեթոդներով Լիազորագրեր Գույքագրման համեմատական ցուցակներ Վերագնահատման և միջինացման կարգադրություններ • Կազմում է հետևյալ հաշվետվությունները Քանակա-գումարային մնացորդների վիճակը և շրջանառության տեղեկագրերը ըստ պահեստների, նյութական արժեքների և խմբաքանակների Կոնկրետ նյութական արժեքի շարժը – (Т-հաշիվ) Գործառնությունների մատյան պահեստներով, նյութական արժեքներով Մուտքի / ելքի մատյան խմբավորված ըստ մատակարարների / գնորդների Աշխատավարձ • Ձևավորում է անկետային տվյալները • Մշակում է հետևյալ փաստաթղթերը Տաբելներ Արձակուրդայինների և հիվանդաթերթիկների հաշվարկներ Պարգևավճարների և այլ հավելումների հաշվարկներ Հրամաններ դրույքաչափի, ստորաբաժանման կամ պաշտոնի փոփոխության վերաբերյալ • Կազմում է հետևյալ հաշվետվությունները Վճարացուցակներ Հաշվարկային թերթիկներ Ամփոփված տվյալներ ըստ հավելումների/պահումների, ստորաբաժանումների Եկամտային և սոցապի հաշվարկներ Կադրեր • Ձևավորում է կադրային տվյալները • Մշակում է հետևյալ փաստաթղթերը Կադրային թերթիկ Հավելում/պահման հրաման Արձակուրդի հրաման Տաբելներ • Կազմում է հետևյալ հաշվետվությունները Անձնական քարտ Տեղեկանք անձնական տվյալների վերաբերյալ Համակարգի ներդրման ծառայությունները կտևեն պայմանագիր կնքելուց հետո 3-4 ամիս					

1. Ապարատային տեխնիկական պահանջներ

	Սերվեր	Կլիենտական համակարգիչ
ոցեսոր	>= Intel® core i5	-
ներատիվ հիշողություն	>= 8 GB DDR3	>= 4GB
ջտ սկավառակ	>= 2x500GB for RAID 1	-

2. Ծրագրային տեխնիկական պահանջներ

	Սերվեր	Կլիենտական համակարգիչ
երացիոն համակարգ	>= Windows Server 2012 R2 (English) with Regional Settings English(US)	Windows 7
ալների բազաների ավարման համակարգ	Microsoft SQL 2012, 2014 or 2016 Standart X64 (English) with last updates (SP. Etc..)	-
ծրագրեր	-	-

ռայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011018695
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀԿՀՀ 02698604

Ա.Խաչատրյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
Իրավ.հասցե՝ ք.Երևան, Չարենցի փ. 1
Հ/Հ '1930030005130100
Կոնվերս Բանկ ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 00807555

Գ. Սարգսյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«19» 05 2021 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-21/34 ծածկագրով պայմանագրի
185-21

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հոդված	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	48441300/1	Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթ	4232					1909950	1909950	1909950	1909950	3873450	3873450	3873450	3873450	3873450

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՎՀՀ 900011018695
ՀՀ ՖԵՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀԿՀՀ 02698604

Ա. Խաչատրյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ
Իրավ.հասցե՝ ք.Երևան, Չարենցի փ. 1
հ/հ՝ 1930030005130100
Կոնվերս Բանկ ՓԲԸ
ՀԿՀՀ՝ 00807555

Գ. Սարգսյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 3
«19» 05 2021թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-21/34 ծածկագրով պայմանագրի
185-21

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2021թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2021 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2021թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«19» 05 2021 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-21/34 ծածկագրով պայմանագրի
185-21

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 2021թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2021թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն